

ԻՐԱՆ - ՇԱՅԱՍԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՎԵԼԻ ԵՆ ԸՆԴԱՅՆՎՈՒՄ



ՀՀ նախագահ Ռոբերտ Զոհարյանի երկօրյա այցը Իրան ավելի բարձր մակարդակի հասցրեց երկու բարեկամ երկրների հարաբերությունները: Այս մասին ԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադն ասաց. «Իրան - Հայաստան հարաբերությունները բարեկամական են, կայուն և զարգացող»: Նա ավելացրեց. «Այժմ մեր երկրորդ հարաբերություններն ամենատարբեր

ուղղություններով զարգացում են ապրում: Մենք երկուստեք հաստատական ենք և ցանկանում ենք զարգացնել երկկողմ հարաբերությունները»:

Նշելով, որ քննարկման է դրվել երկկողմ հարաբերությունների ողջ փաթեթը, պրն. Ահմադինեժադն շեշտեց. «Միջազգային բազմաթիվ հարցերում երկու երկրները ընդհա-

Ամենայն Հայոց Կաթողիկոս. «Հայոց ցեղասպանությունը քննարկման ենթակա չէ»

«Հայոց ցեղասպանությունը 90 տարվա իրողություն է: Մեր ժողովրդի համար այս հարցը քննարկման ենթակա չէ», - հայտարարել է Ամենայն հայոց Գարեգին Երկրորդ կաթողիկոսը՝ Ստամբուլում կայացած ասուլիսում:

Գարեգին Երկրորդ կաթողիկոսը շեշտել է, որ «նման իրադարձությունները պետք է դատապարտվեն բոլոր ժողովուրդների կողմից, որպեսզի մարդկությունը փրկվի դրանց կրկնությունից»:



Ինչպես հաղորդում է Ստամբուլի «Մարմարա» օրաթերթը, Վեհափառ հայրապետը նշել է, որ Հայոց ցեղասպանության փաստն ընդունում են բոլոր երկրները, բացի թուրքիայից, որովհետև, ըստ նրա, ցեղասպանության իրողությունն ապացուցող բազմաթիվ փաստեր կան:

Հայկական հարցով թուրքիայում անցկացված վերջին խորհրդաժողովների կապակցությամբ հարցին ի պատասխան Վեհափառը հայտարարել է, որ եթե այդ գիտական խորհրդաժողովներն անցկացվեն հասարակության իրազեկությունը ճշմարտության մասին բարձրացնելու նպատակով, ապա շատ լավ է, «իսկ եթե դրանք կազմակերպվում են քաղաքական նպատակներով, ապա չեն

կարող ծառայել իրենց նպատակին»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Ստամբուլ լուսաբանվել է նաև թուրքական մամուլի կողմից: Վեհափառի ասուլիսին վերաբերող նյութը «Ձաման» օրաթերթում վերնագրված է՝ «Հայոց Պատրիարքի գրգռիչ մեկնաբանությունը», «Ռադիկալ»-ն օգտագործել է «Գարեգին Երկրորդ. «Ցեղասպանությունը ճշմարտություն է» վերնագիրը, «Միլիթ»-ը՝ «Պատրի-



ԻՐԱՆ - ՇԱՅԱՍԱՆ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՎԵԼԻ ԵՆ ԸՆԴԱՅՆՎՈՒՄ ... 1



ASALA-Ն ԸՆԴՂԻՄ ԶՐԱՎԱՊԱՏ
MERCEDES-ՆԵՐԻ ... 3



ԻՐԱՆԱՇԱՅԱՎԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ ... 8

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԷԶ ... 5

ՊԱՐՏԱԴՐՎՈՂ ԶԱՎ

«Հազարամյակի մարտահրավերներ» ամերիկյան ծրագրի Հայաստանին վերաբերող ամենահիմնական հարցը արևմտյան գաղափարախոսների դիտանկյունով Հայաստանին առումակայանից զրկելու մեջ է բացատրվում: Արևմտյան տերությունները միաբերան խոսում են Հայաստանի «շահերի» մասին ու շեշտակիորեն պնդում, թե «Հայկական առումակայանի փակման հարցը լրջագույն հարց է ինչպես Հայաստանի կառավարության, այնպես էլ Հայաստանի ժողովրդի համար: Սա իսկապես մեծ որոշում է, որ Հայաստանը պետք է առնի մտավայրի մի քանի տարվա ընթացքում. այստեղ անվտանգության հարցեր կան, որոնք վերաբերում են Հայաստանին և իր հարևաններին»:

(Շեշտադրումը մերն է. Ա.)

Իհարկե նրանք համաձայն չեն Հայաստանում նոր առումակայան կառուցելու գաղափարի հետ և միանշանակ պնդում են թե՛ «Լավագույն դեպքում կարող են օգնել Հայաստանին փակել գործող առումակայանը»:

իրենց պահանջը «ժողովրդավարական հիմքերով» պարտադրելու համար ավելացնում են, որ իրենց կարծիքով «ամերիկյան որևէ ընկերություն Հայաստանում նոր առումակայան չի կառուցելու»:

Առանց որևէ հավելյալ մեկնաբանման և անգնե աչքով նույնիսկ երևում է, որ նրանք ոչ միայն ուզում են ճշտել մեր անելիքները, այլ նաև նպատակը, ռազմավարությունն ու համապատասխան գործեղանակը: Մեր «բարեկամները» չեն մոռանում անմիջապես ավելացնելու, որ իրենք պատրաստ են «օգնել Հայաստանին միարժեք ճիշտ որոշում ընդունելու» համար:

Այստեղից էլ ջրի երես է գալիս արևմտյան նենգ մտադրությունը՝ Հայաստանին զրկել էներգետիկ անկախությունից: Բայց ինչո՞ւ: Ի՞նչ արժի էներգետիկ անկախությունը և ինչու է արևմուտքը մեծ ուժ գործադրում այն Հայաստանից իսկելու համար: Կան ասենք, ինչո՞ւ Արևմուտքի «մարդկային» այդ ծառայությունը, չի առաջարկվում որևէ արևմտյան երկրի: Օրինակ՝ Բելգիան տարածքով գրեթե Հայաստանի Հանրապետության հավասար է, իսկ ժողովրդով նրա քառա-

Արևմուտքը անընդհատ հիշեցնում է Հայաստանի առումակայանի փակման կարևորությունը: Նույն ժամանակ միջազգային զանգվածային լրատվամիջոցները հաղորդում են թե՛ Թուրքիան մտադիր է մինչև 2015թ. կառուցել երեք առումակայան էլկտրակայան (ԱԷԿ): Հիշեցնենք, որ հայկական ԱԷԿ-ի փակման համար ճշտված թվականը 2012թ. է:

պատիկը, իհարկե, շատ ավելի հարուստ, այդուհանդերձ էներգետիկայի այլընտրանքների հարց չի առաջադրվում Եվրոպայի սրտում տեղավոր-

ված այդ երկրին, որի տարածքում այսօր յոթը առումակայան է աշխատում: Անվտանգությունը բարձրացնելու իրախարեն, նրանք ուզում են մեզմից խլել մեր գիտատեխնիկական մեծ հարստությունը՝ առումակայանը: Իսկ առումակայանի գոյությունը Հայաստանի համար շնչելու պես կարևոր է, քանզի անկախ իր էներգետիկ արտադրանքից այն որոշակիորեն ազդում է տարածաշրջանի ռազմա-քաղաքական հավասարակշռության վրա:

Անկասկած Հայաստանի հզորացման գլխավոր գրավականը՝ նախ նրա էներգետիկ անկախությունն է և ապա էներգետիկ բոլոր պահանջների բա-

Գործարանի վաճառք

Ճամբորդության պարճառով





Ցանկացողները կարող են ամեն օր առավոտյան ժամը 9-ից 13-ը և 17-ից 22-ը զանգահարել 88040469 Պողոսյան հեռախոսահամարով

فروش کارخانه به علت مسافرت

امکانات:
 برق ۱۰۰ آمپر سه فاز,
 دو خط تلفن,
 چاه نیمه عمیق ۵۰ متر,
 آبنبار ۵۰۰۰۰ لیتری در دو قسمت,
 دارای دو قسمت دفتری و یک انبار.

مشخصات:
 مساحت کل: ۵۰۰ متر مربع
 زیر بنا: ۴۰۰ متر مربع در دو طبقه
 دارای جواز تعمیرگاه

برای ارتباط با ما می توانید هر روز از ساعت ۹ الی ۱۳ و ۱۷ الی ۲۲ با شماره تلفن ۸۸۰۴۰۴۶۹ بغوسیان تماس حاصل فرمایید.

ՑՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՒՄԱՍԱՆԻ ՂԵՄՊԱՆԱՏԱՆ ԱՌՋԵԿ

«STOP» ցուցադրատեսիլով 10 հասարակական կազմակերպություններ, շուրջ 50 քաղաքացիների հետ միասին հունիսի 6-ին, Երևանում Ռուսաստանի դեսպանատան առջև ցույց էին կազմակերպել: Նրանք դատապարտում էին Ռուսաստանում մոլեգնող ռասիստական խմբավորումների, մասնավորապես, սափարգուլիների գործունեությունը և պահանջում էին ՌԴ իշխանություններից անհապաղ միջոցներ ձեռնարկել մարդասպաններին ձեռքակալելու և պատժելու ուղղությամբ:



«Այն, ինչ տեղի է ունենում Ռուսաստանում հայազգիների, ներկայացուցիչների նկատմամբ անթույլատրելի է: Ռուսաստանի իշխանությունները իրականում բավարար չափով ոչ հետաքննություն են անում և անգամ հետևողական չեն, որ այն ինչ տեղի է ունենում ինչ-որ կերպ պատժվի: Մեր կարծիքով ռուսական իշխանությունների այս ոչինչ չանելը ինքնին նշանակում է խրախուսել այս ամենի շարունակությունը», - դժգոհում է «Հանուն գիտության զարգացման» նախաձեռնող խմբի անդամ Արսեն Խառատյանը:

«Հայաստանի հելսինկյան կոմիտե»-ի նախագահ Ավետիք Իշխանյանը, որը ևս միացել էր բողոքի ակցիային, մի ճշմարտություն է բացա-



فروشگاه تکنو پارشن

بوس انواع لوازم بخار، آب، گاز

samson
Spirax
Sarco
Honeywell
Danfoss

شیرهای فشار شکن، ترموستاتیک، اطمینان، شیرهای برقی، فلکه های بخار، شیر آلات PVC، لوله گیرهای فلزی و لاستیکی، کنترل آلات مکانیکی و الکترونیکی، پنوماتیک و لوازم آمونیاکی و کلیه شیر آلات و اتصالات استنلس استیل در آلیاژهای مختلف

شیرهای فشار شکن، ترموستاتیک، اطمینان، شیرهای برقی، فلکه های بخار، شیر آلات PVC، لوله گیرهای فلزی و لاستیکی، کنترل آلات مکانیکی و الکترونیکی، پنوماتیک و لوازم آمونیاکی و کلیه شیر آلات و اتصالات استنلس استیل در آلیاژهای مختلف

خ خیام شمالی، روبروی پارک شهر، کوچه شهید اکبر روحی، پاساژ ۱۱۰، طبقه اول (بالای همکف)، پلاک ۱

ژوزف - هاملت تلفن: ۳۳۱۱۲۲۵۷ تلفکس: ۳۳۹۲۵۴۳۹

ԻՐԱՆԸ ԳԻ ՎԱՍՏԱՏՈՒՄ ԻՐԱՆ-ՎԱՅԱՍՏԱՆ ԳԱԶՍԱՐԻ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ «ԳԱԶՊՐՈՄ» ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Ա.Զ.Գ.»-ը Իրանը գտնում է, որ դարձրապես հակամարտությունը կարող է լուծվել բացառապես բանակցությունների ճանապարհով: Հայաստանում Իրանի փոխդեսպան Ալի Ակբար Ջոկարի խոսքերով, Իրանը պատրաստ է աջակցել հակամարտության խաղաղ կարգավորմանը, քանի որ լավ հարաբերություններ ունի բոլոր հարևաններին և շահագրգիռ է տարածաշրջանում կայունության հարցում:

Երևանում ասուլիսի ընթացքում Իրանի փոխդեսպանն անդրադարձել է նաև Իրան-Հայաստանի դադարադրման կհանգեցնող հարցերին, նշելով, որ Իրան-Հայաստանի դադարադրման շինարարության հայ-իրանական պայմանագրում:

Նազարում որևէ փոփոխություն չի արվել: Փոխդեսպանն ընդգծել է այս հանգամանքը, նշելով, թե Իրանը տեղեկացված չէ «Գազպրոմի»՝ գազատարի շինարարության մասնակցելու մտադրությամբ: Իրանցի դիվանագետը կարևորել է նաև, որ հայ բարձրատիման պաշտոնյաների հետ հանդիպումներում չի հաստատվել տեղեկություն, թե «Գազպրոմին» փոխանցվել է Իրան-Հայաստանի գազատարի որոշակի հատված:

Ամեն դեպքում գազատարը շահագործման կհանձնվի նախաշրջանում ժամկետներում, այսինքն՝ 2007թ. հունվարի 1-ին:

«ԳԱԶՊՐՈՄ»-Ը ՄՏԱԴԻՐ Է ԳՆԵԼ ԻՐԱՆ-ՎԱՅԱՍՏԱՆ ԳԱԶՍԱՐԸ

«Ա.Զ.ԱՏՈՒԹՅՈՒՆ», Ռ/Կ 30.06.06: «Գազպրոմ»-ը մտադիր է դնել Իրան-Հայաստանի գազատարը: Այդ մասին ուսական գազային հսկայի բաժնետերերի տարեկան ժողովում այսօր հայտարարել է «Գազպրոմ»-ի վարչության նախագահի տեղակալ Ալեքսանդր Ռյազանովը:



Գործակալությունը նշում է, որ 2007 թվականին Իրան-Հայաստանի գազատարի հզորությունը կազմելու է տարեկան 1,2 միլիարդ խորանարդ մետր գազ:

Հայաստանի իշխանությունները բազմիցս հայտարարել են, թե մտադիր չեն մասնակցություններ Իրան-Հայաստանի գազատարը:

ԵՎԱ ՄԵԿ ԱՂԻՐԵՋԱՆ, ԱՅՍ ԱՆԳԱՍ՝ ԹՅՈՒՐԵԱՎԱՍՆ

«ԼՐԱԳԻՐ», 12.06.2006: Հարավային Ադրբեջանի ազգային զորքերի շարժման առաջնորդ Մահմադազի Չեհրենեգարին օրերս ձերբակալել էին Թուրքիայի հատուկ ծառայությունները և հայտարարել, որ կասկածներ կան, թե նրա դեմ մահափորձ է նախապատրաստվում, հայտնում է Day.az կայքը: Մահմադազի Չեհրենեգարին արդեն

հայտարարել է, որ Իրանը կբայթայվի, և նրա տարածքի վրա ստեղծվելիք պետություններին մեկ կլինի ադրբեջանական: Հարավային Ադրբեջանի Թուրքական հանրապետությունը: Ըստ նրա, այս պահին Իրանի ադրբեջանցիները ուզում են կամ ինքնավարություն, կամ անկախություն, կամ միավորում Ադրբեջանի հետ՝ ընտրությունը ադրբեջանցիներին է:

1 → ՊԱՐՏԱԴՐՎՈՐ ԶԱՄԱՆ

վարարությունը: Անկախության առաջին տարիների փորձառությունը և հայոց բնօրրանին վիճակված աշխարհաքաղաքական դիրքը ցույց տվեցին, որ իրոք Հայաստանը պետք է միշտ ենթարկվի անկախության ծագող, որպես գլխավոր բանալին իր պետական անկախության: Աժան, հուսալի և անխափան ենթարկվելու մեծ աղբյուրների առկայությունը Հայաստանի համար հացից ավելի հարկավոր է, ոչ միայն ֆիզիկական գոյությունը պահելու, այլ մասնավորապես տնտեսական զարգացման և ազգաբնակչության բարօրության համար:

Մեծամորի ատոմակայանի գործարկումով Հայաստանը շարունակում է մնալ որպես ատոմակայան էներգետիկայի խաղաղ շահագործման պետություն, ոչ թե նրա համար, որ ենթարկվել այլընտրանքներ չկան, այլ նրա համար որ այդ Հայաստանի համար տնտեսական մեծ և շարունակվող նշանակություն ունի, որ նաև երաշխավորում է պետության էներգետիկ անկախությունը:

Հայաստանի ԱԿ-ի դեմ ուղղված բոլոր սլաքները, դիտավորյալ կամ ոչ, մեկ նպատակ են հետապնդում՝ Հայաստանին, որպես տարածաշրջանում ատոմակայան էներգետիկ խաղաղ օգտագործող միակ պետություն, որ գերազանցապես ունի գիտատեխնիկական բոլոր անձնակազմերը՝ այս բնագավառի տիրապետության, շահագործման և ապագա զարգացման համար, դուրս բերել էներգետիկ անկախություն շնորհող գոյակիցակցի, որպեսզի էներգետիկ սովի հեռանկարով՝ հնարավոր լինի նրան պարտադրել ցանկացած արտաքին քաղաքականություն:

Օգտագործված աղբյուրներ:
1- Տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան աշխատանքային խմբի 12-րդ նիստի ավարտին հրավիրված ասուլիսում ԱՄՆ արտգործնախարարության Եվրոպայի և Եվրասիայի գծով համակարգող Թամ Ադամսի արտահայտված խոսքերը:
2- Մեծամորի ատոմակայանի վերականգնումը որպես Հայաստանի էներգետիկ անկախության միակ կոպան,՝ դոկտ. Զավեն Կիրակոսյան, «Արաքս» ամսագիր, թիվ 76, նոյ. - դեկտ. 1995թ., էջ 31-36:

فروشگاه آارات

فروشنده لوازم هیدرولیک پنوماتیک

هیدرولیک، پمپ، هیدروموتور، شیر برقی، فشار شکن، ملونتر پنوماتیک واحد مراقبت، جک، شیر برقی، رگلاتور، فلو کنترول، پرشر سوئیچ، پخش لوازم اصلی پنوماتیک کاموزی-ایتالیایی

آدرس: سعدي جنبوی، کوچه علیچور، پاساژ شمس، پلاک ۸

تلفن: ۲۲۹۴۱۸۱۸ - ۲۲۹۷۱۲۷۲

ՄԱՍՆՈՅ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Վերջին ժամանակահատվածին, հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող և «Ուխտ Արարատի-Յ.Ա.Յ.Գ.Բ. Գախկին բանտարկեալներ և ազատարտիկներ» հասարակական կազմակերպութեան վերագրուող որոշ յայտարարութիւններու ստեղծած շփոթն ու անորոշութիւնը փարատելու և իրերն ու երևոյթները յստակացնելու նախանձախնդրութեամբ, այսու կուգանք իրագրելու՝

ա- Յ.Ա.Յ.Գ.Բ.անակի քաղաքական կեցուածքները կը յայտարարուին իր կեդրոնական մարմիններուն կողմէ, ուստի ոչ ոք լիազօրուած է, ուղղակի կամ անուղղակի կազմակերպութեան անունը օգտագործելով, սեփական անպատասխանատու կեցուածքները ուղղել հասարակական կարծիքին:

բ- Կազմակերպութեան մարտական տարերքին, պայքարի անհղուծեանց և քաղաքական մշակոյթին անյարիր է «նախկին մարտիկներ» հասկացողութիւնը:

Յ.Ա.Յ.Գ. Բանակը ունի միայն մարտիկներ: Կենցաղային և այլ բնոյթի հարցեր լուծելու նկրտումով «նախկին մարտիկներ» հասկացողութեան շրջագայունը, միայն ու միայն պատեհապաշտական նպատակներու հետապնդման կը ծառայէ:

գ- Յ.Ա.Յ.Գ. Բանակը պաշտօնապէս բազմիցս յայտարարած է, որ Հայաստանի Հանրապետութեան մէջ չունի խարիսխ կամ ներկայացուցիչ: Հետևաբար ինքնակոչ անհատներու՝ գծուծ հաշուարկները թելադրուած, յետին նպատակներուն տուրք մատուցող գործունէութիւնը ի սկզբանէ դատապարտուած է ծախողութեան:

դ- Յ.Ա.Յ.Գ. Բանակը իրեն իրաւունք կը վերապահէ՝ համապատասխան պահուն ու վայրին մէջ, պատասխանատուութեան կանչել ունէ անհատ որու գործունէութիւնը ուղղակի կամ անուղղակի կերպով կը վնասէ կազմակերպութեան վարկին և սկզբունքներուն:

ե- Հայկական մամուլէ կը խնդրուի՝ ականջալուր ըլլալ ազգային և պետական անվտանգութեան հիմնադրոյթներուն և զգայացուցման արտորանքով չտոնակոյտել ազգային սրբութիւնները:

22 Յունիս 2006
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶՍԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿ
-Մամլոյ Դիւան-

Իրաքահայության կյանքից ԸՆԴՈՒՄԻՆԻՍՏՐԱՆԻՍՏՈՒՆԸ ԵՐԵՔ ԼԵԶՎՈՎ

(Միջը նախորդ համարում)

Ներքո հղվածը արաբերենից պարսկերենի էր թարգմանել պրն. Աբրուլ-Միր Ռաշիդին, որը հայերենի թարգմանվեց մեզ մոտ և ներկայացվեց ընթերցողին:

Արաբերեն

Մտանք մի դասարան: Աշակերտությունը ոտքի ելավ և միաձայն բողոքեց «Կեցցե՛ Հայրենիքը»: Իսկ մենք մեր սրտերում, ասացինք կեցցե՛ն Հայրենիքի զավակները: Մեզ դիմավորեց օրինաս-Ջեհր Էդիշուն, նա ասորի է և արաբերեն լեզվի ուսուցչուհի: Նրանից աշակերտության դասերի մակարդակի վերաբերյալ հարցրինք, ասաց. «Ուրախ եմ հայտնելու, որ դասերի մակարդակը բավականին բարձր է, որովհետև աշակերտության թիվը քիչ է, ինչը ուսուցչին առիթ է տալիս ավելի շատ ժամ հատկացնել յուրաքանչյուր աշակերտի: Այս ատումով դպրոցը շատ լավ վիճակի մեջ է և ես կըթաղաստիարակչության ծրագրի հիման վրա կարողանում եմ արաբերենը ուսուցանել»:

Այնուհետ գրույցի նստեցինք չորրորդ և վեցերորդ դասարանների արաբերենի ուսուցիչ պարոն Նոյն Աբրուլ-Նադիրի հետ:

Նա ասաց. «Այս դպրոցը մոտ ապագայում շատ լավ պտուղ է տալու Հայ սերունդներին և վերագտնելու է իր նախկին բարձրունքը, որովհետև այն անցյալում շատ կարևոր դեր է ունեցել Իրաքի քաղաքակրթության ձևավորման մեջ»:

Հայերեն

Արաբերենի հետ միատեղ, այստեղ դասավանդվում է նաև Հայոց լեզուն, օրիորդներ Շաբե Աղիյանի և Գոհարիկ Պետրոսյանի միջոցով: «Այս ըզրոցը նախկինում հայտնի էր «Հայոց մասնավոր երկսեռ դպրոց» անունով և 5-18 տարեկան աշակերտները այստեղ ուսում էին առնում Հայերեն և արաբերեն լեզուներով»- ասում է օր. Աբրուլ-Նադիրը և ավելացնում. «Սակայն, զբժբախտաբար 1974թ. այն բաժանվեց երեք մասերի՝ 1-«Ալխամայիլ» մանկապարտեզ, 2-«Ջաֆֆար» տարրական, և 3-«Իբն Էլ Հիշամ» ուղեցույց

դպրոցներ»: Օր. Աղիյանը ապա շարունակում է. «Հուսամ կկարողանաք վերականգնել մեր նախկին վիճակը և ամեն ինչ դեպի լավ կգնա»:

Իսկ անգլերեն լեզվի ուսուցչուհի օր. Մանդա Արամայիս Գևորգյանն ասում է. «Մտադիր ենք անգլերեն լեզվի դասավանդման համար ձայնա-



պատկերային համակարգ տեղադրել, որպեսզի ավելի արդյունավետ ձևերով դասավանդվեն նոր գրքերը, թե՛ խոսակցական և թե՛ գրական ուսման մակարդակը ավելի բարձրացնելու համար»:

Գրադարան

Իրաքում, դպրոցների մեծամասնությունը զրկված է գրադարանից, բայց այստեղ հայկական դպրոցի սնորհնությունը մի սրահ է պատրաստել ընթերցանության համար և աշակերտները կարող են նկարագրող գրքերը վերցնել և սուսն տանել: Ավելի բարձր տարիք ունեցող աշակերտները կարող են օգտվել նաև ընթերցանության սրահից:

Գրադարանի վարիչ օր. Արաբա Սիմոնյանն ասում է. «Գրադարանում հայերեն, արաբերեն և անգլերեն գրքեր ունենք, նաև վերջերս նոր թերթեր և հանդեսներ նվիրվեց գրադարանին»: Նա ավելացրեց. «մենք գրադարանում երկու գրացուցակներ ունենք, մեկը՝ գրադարանի ընդհանուր գրքերի ցուցակն է, մյուսը՝ աշակերտների կողմից վերցված գրքերինը»:

Համակարգիչը դպրոցում

Դպրոցի տեսուչ պրն. Գառնիկ Գրիգոր-Ավագյանը մեզ ցույց է տալիս նաև համակարգչային ծրագրերի դասավանդման սենյակը, որտեղ աշակերտները ծանոթանում են համար

ՄԻ ԲԱՆԻ ՏՈՂՈՎ...

□- Այս տարվա առաջին չորս ամիսներին Հայաստանում արձանագրվել է 59 առանձնապես ծանր հանցագործություն, որը 2,5 անգամ գերազանցում է անցած տարվա նույն ցուցանիշը: Մասնավորապես՝ կատարվել է 27 սպանություն: Սա 2,7 անգամ է գերազանցում անցած տարվա նույն ժամանակահատվածի համանման ցուցանիշը:

□- Հարավային Օսիայի խորհրդարանը պատրաստ է ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

□- Բաֆֆի Հովհաննիսյանը ողջունում է Արթուր Բաղդասարյանի հրաժարականը:

□- Միացյալ Նահանգների գյուղատնտեսության նախարարությունը հայտարարել է, որ 2500 տոննա ցորեն է նվիրելու «Արմինիան թեք-նոլոյի գրուֆ» մասնավոր կամավորական կազմակերպությանը Հայաստանում վաճառելու համար:

□-2005թ.դեկտեմբերի 31-ի որոշումը, ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է մեկ մլրդ 99 մլն ԱՄՆ դոլար:

□- 2008 թվականին Ադրբեջանը կսկսի գազի արտահանումը:

□- Դարաբաղի սահմանադրական հանրաքվեն դեկտեմբերի 10-ին:

□- Ադրբեջանցի խորհրդարանականը վանդալիզմ չի համարում հայկական հուշարձանների ոչնչացումը Նախիջևանում:

□- ԱՄՆ-ի ընկերությունները ցանկանում են Ադրբեջանում ստեղծել նոր նավթաքիմիական համալիր, որի նախնական արժեքը 600 միլիոն դոլար է:

□- Իսրայելը առաջարկում է Բաբու-Թբիլիսի-Էրզրում գազատարը երկարացնել մինչև Ջեյհան:

□- Այս տարվա հինգ ամիսների ընթացքում Հայաստանում գրանցվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված 737 հանցագործության դեպք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 326 դեպքով, կամ 79,6 տոկոսով ավելի:

□- Այս տարվա առաջին երեք ամիսներին Հայաստանի հյուրանոցներից օգտված օտարերկրյա զբոսաշրջիկների թիվը կրճատվել է 10,7 տոկոսով և կազմել վեց հազար 394 մարդ:

□- Ուկրաինան առաջարկել է Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին հանդիպել իր տարածքում:

□- Ալմանը Չեխիայի Սենատում կքննարկվի Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը:

□- Հանս Բլիքս. «Իրանը 2010 թվականին կարող է ատոմային ռումբ ունենալ»:

□- Հյուսիսային Կիպրոսի չճանաչված հանրապետությունը սատարում է Բաքվին Դարաբաղի հարցում:

صنایع کادویی پاسارگاد

تولید کننده ی ظروف سیلور با کارت تضمین یکساله

تلفن: ۷۷۳۳۶۱۱۷ - ۷۷۳۴۵۸۱۴

ՆԿԱՐԱՆԱԿԵԼ Է ԱՐՅԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՏՈՂ ԱՌԱՋԻՆ ԳԵՂԱՐԿԵՍԱԿԱՆ ԿԻՆՈՆԿԱՐԸ

Արցախյան պատերազմի տարիներին տեղի ունեցած պատմական իրադարձություններն են ներկայացված «Ճակատագիր» լիամետրաժ գեղարվեստական ֆիլմում, որի պրեմիերան կկայանա Հունիսի 11-ին Երևանի «Մոսկվա» կինոթատրոնում:



Ինչպես Հունիսի 9-ի ասուլիսում Հայտնեց կինոնկարի գլխավոր դերակատար և սցենարի հեղինակ Գոռ Վարդանյանը, մինչ այդ իր մասնակցությունը նկարահանված մյուս ֆիլմերից այս մեկն առանձնանում է իր թեմատիկայով և նպատակներով: Նա նշեց, որ սա Արցախյան ազատամարտի տարիների մասին պատմող առաջին գեղարվեստական կինոնկարն է: Երեք տարի նախապատրաստական փուլ անցած կինոնկարի սյուժեն հիմնված է իրական պատմական փաստերի վրա:

սի կերպարի ձևավորման գործում: «Հերոս չեն ծնվում, հերոս դառնում են ժամանակի և հանգամանքների թելադրանքով», - համոզված է ֆիլմի էսկյուզիվ պրոդյուսեր Հայկ Բաբրջյանը: Ըստ նրա, երիտասարդները ֆիլմի միջոցով կծանոթանան Հայ ազգի ոչ վաղ անցյալի պատմությանը, ազգային ինքնորոշման գաղափարի ծնունդին, ազգային բանակի կազմավորմանը և տարած հաղթանակներին: Ֆիլմի նկարահանումներն իրականացվել են Արցախում և ԱՄՆ-ում, այն նկարահանված է հոլիվուդյան ֆիլմերի տարբերակով: Նախնական փուլում ֆիլմի աշխատակազմը խորհրդակցել է աշխատել է Ղարաբաղյան պատերազմի ակնադատ և մասնակից 200-ից ավելի քաղաքական գործիչների և զինվորականների, այդ թվում գեներալ Սաֆուրյանի: Ֆիլմը Հունիսի 12-ից կցուցադրվի Երևանյան կինոթատրոններում, իսկ Հունիսի 13-ին կկայանա կինոնկարի դարաբաղյան պրեմիերան:

Ֆիլմի հերոսները նույնպես իրական կյանքում ունեն իրենց նախատիպերը: Գլխավոր հերոսը՝ Գոռը մարմնավորում է Հայրենասեր մարտիկի և ազգի պաշտպանի կերպարը: Կրեյվո ծանր կորուստ՝ նա իր մեջ ուժ է գտնում դիմադրելու և պայքարելու թշնամու դեմ: Այն թշնամու, որի հետ նույն բանակի կազմում ինքը մարտնչել է Աֆղանստանում: Գլխավոր հերոսն ապրում է խորը հոգեբանական դրամա:

Ֆիլմի ունի դաստիարակչական մեծ նշանակություն, հասկապես նոր սերնդի մեջ Հայ մարտիկի և ազգային հերո-

ՇԱՍԱՍԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՎԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ ԵՐԵՔ ԸԱԶԱՐ ՍՓՅՈՒՌԵԱԿԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ



ԵՐԵՎԱՆ, 9 ՀՈՒՆԻՍԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ՀԱՅԵՒՆ ԱՅՍՈՐ: Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական

բժշկական համալսարանում Հունիսի 9-ին կայացավ սփյուռքահայ ուսանողների համաբուհական փառատոն հինգ ստեղծագործական ժանրերում՝ երգ, պար, ամուսն, հումոր և երաժշտական կատարումներ:

Սփյուռքահայ ուսանողների միջբուհական խորհրդի ղեկավար և համաբուհական փառատոնի կազմկոմիտեի նախագահ Նորայր Անդրեյանը նշեց, որ արդեն չորրորդ տարին անցկացվող այս փառատոնին մասնակցում են Հայաստանյան բոլոր պետական բուհերի և «Մովսես Խորենացի» ոչ պետական համալսարանի սփյուռքահայ ուսանողները: Ըստ նրա, փառատոնի կազմակերպման նպատակն է ինտեգրել սփյուռքահայ ուսանողներին հայրենական երգին ու պարին հայաստանում: Անդրեյանը հայտնեց նաև, որ կազմակերպիչները բոլոր ստեղծագործական ժանրերի գծով ձևավորել են ժյուրիներ, որոնք էլ հաղթողներին միջոցառման ավարտին կհանձնեն նվերներ և դիպլոմներ:

2 → կարգի, նրա օգտագործման և ծրագրերի հետ: Այս բաժնի վարիչը օր. Լուսինե Հովսեփ-Լազարյանն է:



Երբ ուսում առնելու համար իդեալական:

Նա ասաց «Մենք այստեղ աշակերտներին ծանոթացնում ենք համակարգչի մասերի ու նաև նրա օգտագործման հետ»: Ապա ավելացրեց, որ «Մենք հայերեն, արաբերեն և անգլերեն լեզուների դասավանդման համար նաև օգտվում ենք համակարգիչից»: Օր. Լազարյանն ասաց. «Համակարգիչները միջոցով, աշակերտությանը նաև սովորեցնում ենք սուպերկոմպյուտեր և նկարչության հետ առնչվող որոշ հարցեր: Այս բոլորը դրական ազդեցություն է թողնում աշակերտության վրա: Նամանավանդ լեզվի ուսուցման արդի ձևերը շատ են դյուր գալիս երեխաներին և նրանց մեջ ավելի է հիմնավորվում սովորելու ունակությունը»:

Առաջինների ցուցատախտակ
Դպրոցը մուտք գործելիս ամենաառաջին բանը, որ կարող է այցելուի միտքն ու հույսը դեպի իրեն գրավել գերազանցիկների ցուցատախտակն է, որի վրա փակցված են առաջինից վեցերորդ դասարանների գերազանցիկ աշակերտների նկարները: Այն միտում է աշակերտության միջև առողջ մրցակցություն մթնոլորտ ստեղծել: Ցուցատախտակի վրա նախադասություններ կան գրված, Հիսուս Քրիստոսից և Սուրբ զբբից, դաստիարակման և մաքրությունների խոսքեր, որոնք հիմնականում պնդում են գիտական հաղորդությունների և ապրելակերպի մեջ գոյություն ունեցող անբակտերի կապի մասին:

Դպրոցի շենքը
Դպրոցի շենքը հիմնական փողոցից հեռու է, եկեղեցու խաղաղությունը նաև տարածվում է նրա վրա, որովհետև եկեղեցին նրա հարևանն է: Դասարանները մեծ են և աշակերտության թիվը համեմատական քիչ: Մաքրությունը դպրոցում տիրական է և մթնո-

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ, ԹԵ՞ ԴԻՎԱԿԱՆ ՆՃԱՆՆԵՐ

Ոմանք հավատում են երազներին, մյուսն ասպազան «տնօրինող» թախանների զորությանը և այլն: Ճիշտ են նրանք, թե՞ մոլորյալներ: Ո՞րն և ինչի՞նչ պետք է հավատալ՝ նշանների՞ն, թե՞ Աստծու խոսքին: Հարցերին պատասխանում է Կոտայքի թեմի Ջրվեժի Աբ. Կաթողիկե եկեղեցու հոգևոր հովիվ Ս. Կյուրեղ քին. Տայանը:



Օ- Տեր հայր, նշանված ժամանակ կորցրեցի նշանդրեքի մատանիս: Հարազատներս խորհուրդ տվեցին չամուսնանալ, համարելով կորուստը աստվածային նախազգուշացում: Չլսեցի: Հետագայում անհարթահարելի պատճառներով բաժանվեցի: Նման նշաններ էլ են պատահել, բայց քանի որ հաշիվ չեն առել, կարծես մի աներևույթ ձեռք պատժել է ինձ: Ինչպե՞ս կմեկնաբանեք (Ս. Մ. 34 տ.):

սի քարոզչություն տանել, որ դրանք վերանան (Արկադի Դարբինյան):

- Միանշանակ դժվար է ասել: Դրանք կարող են լինել զգուշացումներ, բայց մեծ մասամբ մեք դրանք կարող ենք չարի հետ, անսալով Ավետարանին, ուր ասվում է, որ ամեն երկնային բան չէ, որ Աստուծոց է: Այսինքն, դրանք կարող են դիվական չար ուժերի գործեր լինել: Մեր ժողովրդի մեջ շատ է ընդունված. արդ թափվեց՝ կռիվ է լինելու, հայտնի կտրվեց՝ մահ կլինի, և այլն: Այս ամենը կոչվում է սնահավատություն, որը մերժելի է եկեղեցու կողմից որպես ոչ աստվածային երևույթ: Իսկ ինչպե՞ս զանազան: Եթե որևէ նշան ու երազ զղջումի, ապաշխարանքի, դեպի Աստված դարձի կոչ է, վստահաբար Աստուծոց է, մնացյալին խորհուրդ չէի տա հավատալ:

- Քարոզչություն միշտ էլ տարվել է և հիմա էլ ընթացքի մեջ է թե՛ հեռուստատեսությամբ, թե՛ մամուլով, թե՛ քարոզչությունների ժամանակ, բայց մարդիկ հետ չեն կանգնում իրենց հեթանոսական սովորություններից, քանի որ սովորությունը բնավորություն է դաստիարակում, բնավորությունը՝ կյանքի ճանապարհ դառնում: Ավետարանում ասվում է՝ ականց ունեցողը թող լսի, աչք ունեցողը թող տեսնի: Ցավոք, շատերն են գերադասում փոխաբերական իմաստով ասված այս անդամալուծությունը և ոչ չեն տեսնում, ոչ էլ լսում: Օրինակ, իմ ծխից մի կնոջ քանիցս բացատրեցի, հորդորեցի հետ կանգնել այդ մոլորությունից, սակայն անօգուտ: Նա հիմնավորում էր, թե ինքը դրանով իր հացի փողն է վաստակում: Ի վերջո, ստիպված եղա նրան հեռացնել եկեղեցուց, որ չպղտորի հավատացյալ մարդկանց:

Օ- Որքան տեղյակ եմ, մեր դավանաբանությունը չի ընդունում բախտազուրկությունն ու սուրճի բաժակ նայելը: Հնարավոր չէ՞ այդ անընդունելի գործողությունների դեմ այնպի-

նական երգին ու պարին հայաստանաբան իրենց ընկերների միջոցով:

Ն. Անդրեյանը հայտնեց նաև, որ կազմակերպիչները բոլոր ստեղծագործական ժանրերի գծով ձևավորել են ժյուրիներ, որոնք էլ հաղթողներին միջոցառման ավարտին կհանձնեն նվերներ և դիպլոմներ:

Սփյուռքահայ ուսանողների միջբուհական խորհրդի ղեկավարի հայտնած տվյալներով, ներկայումս հայաստանյան պետական և ոչ պետական բուհերում սովորում են 3000 սփյուռքահայ ուսանողներ:

Դպրոցի տարեվճարը

Ըստ պրն. Գառնիկ Գրիգոր-Ավագյանի՝ «Այս դպրոցը 2004 թ. հոկտ. 15-ին վերաբացվել է, որպես հայոց մասնավոր երկսեռ դպրոց: Այստեղ թեև աշակերտությունը տարեվճար է մուծում, բայց դա ավելի շուտ սիմվոլիկ նշանակություն ունի, որովհետև ամեն մի աշակերտի տարեկան վճարը իրապարհ 100 հազար դրամ է, որ հավասար է 67 ԱՄՆ դոլարի: Իհարկե, կարիքավոր ընտանիքներին որոշակի զեղծեր է տրվում:

Դպրոցի աշակերտության ընդհանուր թիվը 171 հոգի է, որոնցից 92-ը տղա և 79-ը աղջիկ են: Դասավանդման առումով, դպրոցը ենթարկվում է Իրաքի Կրթադաստիարակչության նախարարության և դասերը Հիմնականորեն անցնում են արաբերենով, մեկ տարբերությամբ, որ այստեղ կարդում են նաև հայոց լեզու և կրոն, որը նաև հայերեն է: Դասագրքերը բոլորը Կրթադաստիարակչության նախարարության կողմից է տրվում: Իսկ ուսուցիչներին և դպրոցի այլ պաշտոնյաներին աշխատավարձը տրվում է իրաքահայության նվիրատուություններով»:

Օ- Հորաքույրս գրեցի է, մա կիր է անում բարի նպատակներով: Մի՞թե մա կախարհ է (Մարիամիկ, 27 տ.):

- Սև ու սպիտակ մոգություն, չար ու բարի գիր անողներ, սրանց համարում են մանկական հեքիաթների ժանրից, բայց հղի իրական վտանգով, քանի որ այս ամենի աղբյուրը չարն է: Բարի նպատակով կախարհություն չեն անում, այլ բարիք են գործում: Ցավոք, սիրելի Մարիամ, հորաքույրդ ոչ աստվածահաճո խաբեության ճանապարհն է բռնել:

Օ- Դուք մի անգամ մկրտություն անելիս որտեղ եք տվել աչքի հուլունքը երեխայի վրայից, ինչո՞ւ:

- Այո, և երբեմն խիստ են խոսում, որ լսելի լինեն անհնազանդներին: Վստահ եմ, որ երբ մկրտվող մարդու մեջքին մյուռնով խաչ ենք դնում և ասում՝ սա թող լինի ամուր վահան, որով կարողանաս սատանայի կրակոտ ցետերից (այսինքն՝ հարձակումներից) պաշտպանվել, այլևս պետք չկա նրան խաղալիքներով «գինել»: Մինչդեռ անգիտակից մարդիկ սատվածային դրոշմը՝ մյուռնը քիչ համարելով, դիմում են աչքի հուլունքների: Ոմանք էլ փուշ, ավել ու մալ են խփում դռների առաջ: Սա մոլորությունների համաճարակ է, որ սերնդեղեններով փոխանցվում է՝ իր մեջ չունենալով քրիստոնեական մշտյալ անգամ: Շատ ձեռներեցներ էլ օգտվում են պահանջարկից ու արտադրում աչքի տարատեսակ հուլունքներ, հեթանոսական խաղալիքներ ու դրամ են շահում: Մշտապես հորդոր է եղել մեր սիրելի հավատացյալներին՝ չլինի թե Աստծու ողորմությունը, նրա սուրբ դրոշմը արհամարհեք, դիմելով ուրիշ ուժերի ու խաղալիքների, որովհետև ձեր չիմացությամբ պիտի Աստծու ողորմությունից զրկվեք:

«ԱԶ», 30.06.2006

1 → արք. «Ճանաչեք ցեղասպանությունը»: Հետաքրքրական է, որ թուրքական թերթերը «Կաթողիկոս» բառի փոխարեն օգտագործել են «Պատրիարք» բառը:

Թուրքական թերթերը մշտն են, որ Հայոց հայրապետը գոհունակություն է հայտնել Թուրքիայի և Հայաստանի միջև շարունակվող օդային թռիչքների համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը մշտն են, որ Հայաստանը մեծ ցանկություն ունի Թուրքիայի հետ իր հարաբերությունները կարգավորելու: Գարեգին Երկրորդ վեհափառը ինչեցի է, որ հայերը, որքան էլ ցրված լինեն աշխարհում, ունեն իրենց պետությունը, ուստի, ըստ նրա, Թուրքիայի Հանրապետությունը պետք է խոսի Հայաստանի պետության հետ: Պատասխանելով իր այցի առաջին օրը թուրք ազգայնամուլների կազմակերպած բողոքի ցույցերին վերաբերող հարցին՝ վեհափառը ճշտել է, որ ինքն առաջին անգամ է՝ Մոսկվա այցելում, և որ այդ ցույցերը ոչ մի ազդեցություն չեն ունեցել իր տպավորությունների վրա: Նա հույս է հայտնել, որ հաջորդ այցին նման ցույցեր չեն լինի:

Ստամբուլի գլխավոր դատախազությունը քրեական գործ է հարուցել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի դեմ

Երևան: 30.06.06: ԱրմԻՆֆո: Ստամբուլի գլխավոր դատախազությունը քրեական գործ է հարուցել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի դեմ: Մեղադրանքում ասվում է, որ Թուրքիա կատարած այցի ժամանակ Կաթողիկոսը «թուրքերի ազգային ինքնասիրությունը վիրավորող արտահայտություններ է հնչեցրել»: Այդ մասին հաղորդում է ադրբեջանական «Թրեմո» գործակալությունը՝ վկայակոչելով թուրքական ՁԼՄ-ները: Ստամբուլի գլխավոր դատախազության հայցում նշվում է, որ Ստամբուլում կայացած մամուլ ասուլիսի ժամանակ Գարեգին Բ-ը հայտարարել է Հայոց ցեղասպանությունը ճանաչելու անհրաժեշտության մասին, ինչին ի պատասխան մի խումբ իրավաբաններ բողոք են ներկայացրել դատախազությանը: Գարեգին Բ-ից ցուցմունքներ ստանալու անհնար է Թուրքիայի և Հայաստանի միջև արդարադատության բնագավառում համագործակցության համաձայնագրի բացակայության պատճառով: Սակայն, եթե դատախազությունը անհրաժեշտ համարի, ապա կարող է ցուցմունքներ վերցնելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսին անհապաղ կալանավորելու վերաբերյալ ծանուցում ուղարկել երկրի բոլոր մաքսակետեր, եթե Գարեգին Բ-ը ժամանի Թուրքիա:



- Այնքան ուժեղ եղիր, որ կարողանաս կյանքի հետ պայքարել:
 - Համեստ եղիր և ընդունիր, որ բոլոր գործերը միայնակ չես կարող կատարել:
 - Օգնություն խնդրողների նկատմամբ մեծահոգի եղիր:
 - Անձնական կարիքներիդ դիմաց խնայող ու գոհունակ եղիր:
 - Իմաստուն եղիր և ընդունիր, որ ամեն ինչի մասին տեղեկություն չունես:
 - Այնքան պարզ եղիր, որ հրաշքերի հավատք ունենաս:
 - Ուրախություններդ ուրիշի հետ կիսիր:
 - Ուրիշների տխրության մասնակից դարձիր:
 - Ճանապարհ կորցրածների ուղղեկիցը դարձիր:
 - Երբ կասկածում ես հետևիր նրանց, ովքեր հաջողության են հասել:
 - Առաջինն եղիր, որ մրցակցիդ հաղթանակը շնորհավորում ես:
 - Վերջի հոգին եղիր, պարտված մրցակցիդ քննադատելու մեջ:
 - Որպեսզի չսխալվես, մյուս քայլիցդ վստահ եղիր:
 - Վերանայիր ճանապարհիդ և նպատակդ և վերահաստատիր ընտրած ուղուդ ճշտությունը:
 - Սիրողներիդ հանդեպ եղիր սիրալիր:
- ԵՎ ամենից կարևորը՝ ինքդ եղիր:**

Խորհուրդ ուսանողներին

Ուսման համար լավագույնը առավոտյան ժամերն են, երբ դեռ անոթի ենք: Այդ ժամանակ արյունն արդեն հարուստ է լինում նախորդ օրն ընդունած սննդով, իսկ նյարդերն ու ուղեղը՝ հանգստացած գիշերային հանգստից:

Շատ վատ սովորություն է ճաշից հետո և գիշերը սովորելը: Դա շրջում է բնական ընթացքը. օրգաներն աշխատում են լարված՝ անհանգստությունից խամրում են աչքերը, օրգանիզմը տկարանում է: Հարկ է սովորել լավ օդափոխված սենյակում գլուխը բաց, իսկ ոտքերը՝ տաք վիճակում: Պետք է աշխատանքը ժամանակ առ ժամանակ ընդհատել, խորը շունչ քաշել և սենյակում մի փոքր քայլել:

Ավանավոր շատ գործիչներ, որոնց հաջողվել է պահպանել մտքի ճկուն քարտուրմը մինչև խոր տերություն, սովորել են միայն ցերեկները:



Ժամանակակից շատ մտավորականների մտքի վաղաժամ անպտույտությունն առաջանում է մեծ մասամբ նրանց մտավոր առողջաբանության բացասական սովորությունների պատճառով: Ի դեպ, քառասուն տարի շարունակ արթնանալով սովորականից 2 ժամ ավելի վաղ, մարդն սպասում է գրեթե երեք ու կես տարի ավելի:

ԹԵՎԱՎՈՐ ԽՈՍՔԵՐ

Թևավոր խոսք արտահայտությունը, որանից հասկացվում են գրականությունից մեր խոսքի մեջ մտած համառոտ մեջբերումները, պատկերավոր ու դիպուկ արտահայտությունները, պատմական անձանց իմաստալից խոսքերը, առասպելական և գրական հերոսների անունները, որոնք դարձել են հասարակ անուններ (օրինակ, Գերդուլտ, Ապոլոն և այլն), պատմական անձանց պատկերավոր, սեղմ բնութագրերը, երբեմն նաև ժողովրդական առածները, ասույթները, զանազան պատկերավոր արտահայտություններ, տարբեր արհեստների տերմիններ և այլն:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՂԱՎՆԻ

Այս արտահայտությունը լայն տարածում է ստացել խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի գործունեության կապակցությամբ: Առաջին կոնգրեսը գումարվել է 1949 թվականի ապրիլի 20-25-ը՝ Փարիզում և Պրագայում: Խաղաղության միջազգային խորհրդանշանն էր Ֆրանսիացի նկարիչ Պաբլո Պիկասոյի նկարած աղավին՝ ձիթե-նու ճյուղը կտուցով բռնած: Աղավինին դեռ շատ հին ժամանակներում եղել է պաղաբերության, իսկ հետո նաև խաղաղության խորհրդանշան: Հին Հռոմում ևս խաղաղության խորհրդանշան էր աղավինը, որն իր բույրը հղուտում էր Մարսի (պատերազմի աստծու) շուրջ տված սաղավարտի մեջ:

ԱՆՖԱ ԵՎ ՕՍԵԿԱ
Ակիզբն ու վերջը, լրիվ ամեն ինչ (այժման և օմեզան հունական այբուբենի առաջին և վերջին տառերն են):

Ի՞ՆՉ ԵՆ ԳՈՒՇԱԿՈՒՄ ԱՍՏՂԵՐԸ

ԱՌՅՈՒԾ 23 հուլիս-22 օգոստոս

Շան տարուն Առյուծին բազմա-Շքիվ անակնկալներ են սպասվում: Թեև Առյուծները սիրում են փոփոխություններ, այնուհանդերձ, խորհուրդ է տրվում լուրջ վերաբերվել դրանց: Ընդունեք ժամանակի մարտահրավերները, մի կասկածեք սեփական հնարավորություններին, և հաջողությունը ապահովված կլինի:

Անձնական կյանք. տարվա սկզբին ամուսնացած Առյուծների զգացմունքները փորձության կենթարկվեն: Անխտեմ քայլեր մի արեք, եթե



ուզում եք պահպանել ընտանիքը: Միայնակ Առյուծները պետք է զգուշանան սիրո ծուղակից: Փորձեք ծանրութեթև անել ամեն ինչ և ողջախոս լինել: Տարվա առաջին կեսին Առյուծներին սպասում է անպատասխան սեր: Մինչդեռ տարվա երկրորդ կեսին ամեն ինչ կկարգավորվի: Կարող եք սիրովել հետաքրքիր ուղևորության մեկնելով կամ մանկության ընկերներին հանդիպելով: Հնարավոր է բուռն սիրավեպ: Առյուծի բոլոր երազանքները կիրագործվեն: Ամուսնացած Առյուծների կյանքում հետաքրքիր փոփոխություններ են սպասվում: Կողակցի հետ կարող եք ճաշակել ճանապարհորդության բերկրանքը:

Մասնագիտական ոլորտ. Շան տարուն Առյուծի բոլոր մտահղացումները լավ արժագանք կունենան և կիրագործվեն: Մի տարվեք պատրանքներով և փորձեք իրատես լինել: Այդ դեպքում նյութական օգուտներ կունենաք: Լավ կլինի, եթե մրցակիցները չկանգնեն ձեր ճանապարհին, հակառակ դեպքում ուժեղ հակահարված կստանան ձեզից: Գործարար Առյուծները զգալի հաջողություններ կհասնեն այս տարի: Խորհուրդ է տրվում չփչացնել հարաբերությունները գործընկերների հետ: Ավելին, ձգտեք աջակցել նրանց, և ձեզ հարյուրապատիկը կփոխհատուցվի: Տարվա երկրորդ կեսին մասնագիտական նոր նվաճումների կհասնեք և կհաղթահարեք ցանկացած խոչընդոտ: Տարեվերջին Առյուծներին անգնահատելի աջակցություն ցույց կտան ազդեցիկ անձինք:

Մարդու մարմնի ամենասառը մասը քիթն է:

Բոլոր լեզուներում ամենից շատ կրկնվում է «Ե» ձայնավորը:

Օղանավակայանում էի, Ինձ հետ քարշ էի տալիս Բավականին ծանր ծամպրուկս (Քրտնաթոր դեմքս այդպես էր ցույց տալիս): Երբ ստուգում էին այն, Նրա մեջ գտան Ընդամենը չորս-հինգ լուսանկարներ Ու մի քանի մամակ. Ստուգողը զարմացած նայեց դեմքիս. Բայց չէ որ ես էի կրում Այդ բոլորի ծանր հուշերը Եվ ոչ թե նա...

Սույն բանաստեղծությունները պատկանում է Անահիտ Ներսիսյանին, որը ծնվել է 1965-ին Թեհրանում: Սովորել է «Հ. Թովմասյան» միջնակարգ դպրոցում: Ավարտել է Թեհրանի հայրենագիտական դասընթացները: 2000-ից պաշտոնավարում է հայկական դպրոցներում, որպես Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

Բանաստեղծությունը արտատպում ենք «Համդես» եռամսյա թերթից:

Եվ Աստված մի օր վերցրեց Իր դեղնավուն սաթի համրիչն Ու ասաց.- Խեղ, շառ, ամուսն Իմ, Եվ համրիչի դեղնագույն հատիկներով Որոշվեց ամեն ինչ, Աշխարհը եղավ այսպես որ է՝ Խեղ, շառ,...



Աղավինն պուրակում մի բու է տեսնում և ասում.

- Իզուր ես թողել հայրենի երկիրդ,- ասում է աղավինը:
- Ինչպե՞ս թե իզուր,- վրդովվում է բուն.- չէ՞ որ ես քեզ բացատրեցի՝ արևելքում ինձ ոչ ոք չի սիրում: Էլ ինչո՞ւ ես պետք է մնամ այնտեղ:
Աղավինն այս խոսքի վրա նկատում է.
- Ա՛խ, բու մորաքույր, պետք է փոխես ոչ թե երկիրդ, այլ՝ ձայնդ: Իմացիր, որ ինչպես արևելքում, այնպես էլ արևմուտքում մարդիկ չեն կարող տանել քո չարամիտ ճիշն ու վայրի թրթիջը: Իսկ եթե չես կարող փոխել բնավորությունդ, այն ժամանակ մինչև վերջ ապրի քո սեփական տան մեջ:

- Եղ որտեղի՞ց ես գալիս, բու: Բուն պատասխանում է.
- Ես ապրում էի արևելքում, իսկ հիմա թռչում եմ դեպի արևմուտք: Այսպես պատասխանելով՝ բուն սկսում է չարամտորեն ճչալ ու քահ-քահ ծիծաղել:
Աղավինն նորից է հարցնում.
- Ինչո՞ւ ես թողել հայրենի տունդ և թռչում ես օտար երկրներ:
- Որովհետև արևելքում ինձ չեն սիրում, ասում են, որ զգվելի ձայն ունեն ես:
Եվ բուն ճչում է նորից:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ Ե՞ՐԵ Ե ԵՎԱԳՐՎԵԼ ԴՈՂԱՐԸ

Դոլար դրամական միավորը (գերմանական taler բառից) շրջանառության մեջ է մտել 1785թ. հուլիսի 6-ից: Սկզբում դրամը իրենցից ներկայացնում էին արծաթե մետաղադրամներ: Այսօր ԱՄՆ-ում շրջանառության մեջ են գտնվում մինչև 1928թ. տպագրված 1, 2, 5, 10, 20, 50, 100, 500, 1000, 5000 և 10000-անոց դոլարներ: 100-դոլարանոցներից բարձր թղթադրամները չի թույլատրվում երկրից դուրս հանել: 10000-անոց չեն տպագրվում 1944-ից սկսած և 80-ականների վերջին դրանց թիվը 348 էր: 1969-ից այլևս չի տպագրվում 100 դոլարանոցից բարձր թղթադրամ: 500-անոց թղթադրամի վրա պատկերված է ԱՄՆ-ի 25-րդ նախագահը՝ Մակ-Քեյնլին, 10000-անոցի վրա՝ Սթիվեն Կլիվենդը՝ 22-րդ և 24-րդ նախագահը, 1000-անոց թղթադրամի վրա պատկերված է ֆինան-

սիստ Սեյնոն Պորտլենդ Չեյսը: Դոլարի «բաքս» անվանումը առաջացել է «back» (անգլ.) եղնիկ բառից:



Վագրիկը շատ տխուր էր երևում, նա իր հայրիկի մոտ գնաց և ասաց, - Հայրիկ միթե՞ թանաքը շատ թանկ է: Հայրիկը- ոչ, շատ թանկ չէ: Վագրիկ- Ապա ինչո՞ւ է մայրիկն այսքան անհանգստացել, որ մի քիչ թանաք եմ թափել գորգի վրա:

☺ ☺ ☺

Ճաշելիս Սոֆին ինչ-որ բան է ուզում ասել պապիկին:
- Պապի՛կ:
- Սո՛ւ: Փոքրիկները ուտելիս չափ-տի խոսեն, ասում է պապիկը խիստ տոնով:

Ճաշը վերջանալուց հետո պապիկը ասում է.
- Սոֆի, ինչ որ բան էիր ուզում ասել:
- Արդեն շատ ուշ է, պապիկ: Ուզում էի ասել, որ ապուրիդ մեջ ճանճ կա, իսկ դու արդեն կերել ես:

☺ ☺ ☺

- Տղաս, գիրքն այդպես չեն կարդում: Դու 3-4 էջ միանգամից ես թերթում:
- Ախր, հայրիկ, արկածային գիրք է, ուզում եմ հանցագործին շուտ բռնել:

ԱՄԵՆԱ - ԱՄԵՆԱ

Մարդու մարմնի ամենասառը մասը քիթն է:

Բոլոր լեզուներում ամենից շատ կրկնվում է «Ե» ձայնավորը:

Ամենամեծ գրադարանն աշխարհում ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանն է՝ Վաշինգտոնում: Այնտեղ պահվում է 60 միլիոն հատորից ավել գիրք, իսկ գրադարանների ընդհանուր երկարությունն անցնում է 456,8 կիլոմետրից:

ԱՄԵՆԱՄԵԾ ՍԽԱԼՆ ԱՅՆ Է, ԵՐԲ ԿԱՐՇՈՒՄ ԵՍ, ԹԵ ԴՈՒ ԵՐԲԵՔ ՀԵՍ ՍԽԱԼՎՈՒՄ: ՀԱՐԿՎՎՈՐ Է ՀՎԱՍԱԼ ՍԵՓՎԱԼ ՈՒՇԵՐԻՆ...

اخبار کوتاه

اعتراض نمایندگان به جمهوری آذربایجان

۲۴ تن از نمایندگان مجلس شورای اسلامی خواستار احضار سفیر جمهوری آذربایجان به وزارت امور خارجه شدند. نمایندگان یاد شده در تاریخ ۲۳ خرداد طی تذکری کتبی به وزیر امور خارجه این خواسته را مطرح کردند. دخالت جمهوری آذربایجان در امور داخلی ایران و اهانت رسانه های این کشور به مقامات نظام جمهوری اسلامی به عنوان دلایل عمده نمایندگان برای احضار سفیر جمهوری آذربایجان مطرح شده است. در تذکر کتبی نمایندگان آمده است: اخیراً عده ای در باکو به بهانه حوادث اخیر کشورمان در مقابل سفارت ایران تجمع کرده و پرچم جمهوری اسلامی ایران را به آتش کشیده‌اند. در تذکر نمایندگان تأکید شده است: گسترش تحركات ضد ایرانی به خصوص در مطبوعات و رسانه های آذربایجان و رواج شایعات و اظهارات تفرقه افکنانه و پاره ای اقدامات مداخله جویانه همگی برخلاف حسن همجواری است.

محبوبیت

در نظر سنجی که توسط یک مؤسسه تحقیقاتی آمریکایی موسوم به «پیو» صورت گرفت مشخص گردید که در سال جاری میلادی از محبوبیت ایالات متحده آمریکا نزد جبهانیان به میزان قابل توجهی کاسته شده است.

طبق این نظر سنجی از تعداد کسانی که نسبت به آمریکا دید مثبت داشته‌اند، در اسپانیا ۱۸٪، در ترکیه ۱۰٪ و در هند ۲۰٪ کاسته شده است و اما اکثریت جمعیت ۱۰ کشور از ۱۴ کشوری که در این نظر سنجی شرکت داشتند تأکید کرده‌اند که بعد از جنگ عراق وضعیت امنیتی جهان بدتر و خطرناکتر شده است. به گفته «کارول دوهرتی» مدیر این مؤسسه تنها در سه کشور آمریکا، هند و نیجریه نظر اکثریت مردم متفاوت بوده است. به اعتقاد «دوهرتی» «ادامه بحران در عراق همچنان موجب کاهش محبوبیت آمریکا نزد افکار عمومی اروپا می‌شود، این وضعیت در مورد کشورهای اسلامی نیز صدق می‌کند، چنانچه به‌طور کلی برخوردها نسبت به آمریکا بسیار سرد است.»

طبق آمار ارایه شده از سوی مؤسسه تحقیقاتی یاد شده نظر مردم این کشورها نسبت به بهترین رهبران جهان نیز متفاوت بوده است. در حالی که آمریکایی‌ها «تونی بلر» نخست وزیر انگلیس را بهترین رهبر معرفی کرده‌اند، فرانسوی‌ها و آلمانی‌ها عمدتاً طرفدار خانم «آنگلا مرکل» صدر اعظم آلمان بوده‌اند.

محکومیت

خانم «میشلین کالمی ری» وزیر امور خارجه سوئیس می‌باشد که برای دیداری رسمی در تاریخ ۱۳ ژوئن (۲۳ خرداد) وارد ایران شده بود گفت: «از منظر منافع سوئیس، ارمنستان نقش و جایگاه مهمی در جنوب قفقاز ایفا می‌کند، وی در گفتگوی مطبوعاتی خود همچنین گفت: «سوئیس در نظر دارد تسهیلاتی در صدور رواید برای اتباع ارمنستان در نظر بگیرد». خانم «کالمی ری» با اشاره به روابط ارمنستان و ترکیه تأکید نمود که «سوئیس با شناسایی و محکوم نمودن قتل عام ارمنیان آماده است تا در عادی سازی روابط این دو کشور نقش سازنده‌ای ایفا نماید.»

وزیر امور خارجه سوئیس در مورد نابودی سنگ قبرها و قبرستان های ارمنیان در جمهوری نخجوان گفت: «ما نابودی قبرستان های متعلق به ارمنیان در جلفای نخجوان توسط دولت آذربایجان را محکوم می‌کنیم. و در این رابطه از یونسکو خواسته ایم تا نقش خود را ایفا نماید.»

به گفته خانم «میشل کالمی ری» در ماه سپتامبر (شهریور ماه) نمایندگانی از «هیأت حفاظت از میراث فرهنگی» پارلمان اروپا راهی این منطقه خواهند شد.

سرقت نفت

نیروهای انتظامی ترکیه در نقر را به جرم سرقت نفت از خط لوله نفت باکو-تفلیس -جیحان دستگیر کردند. به گزارش رادیو آزادی این دو نفر متهم هستند که به همراه سه نفر دیگر نفت را از این خط لوله در نزدیکی ترمینال نفتی جیحان سرقت کرده‌اند.

به گزارش رسانه های خبری ترکیه سارقان زمانی در دام مأموران گرفتار شدند که تاکنر نفت خود را پر کرده بودند و آماده خروج از محدوده تریمینال بودند. این در حالی است که به علت فشار زیاد در این لوله سارقان تنها موفق به سرقت ۲ تن نفت شده بودند. به نوشته مطبوعات ترکیه تلاش برای دستگیری سه سارق دیگر همچنان ادامه دارد.

نابودی قیور

نشریه «رالی» آذربایجان» چاپ باکو در مقاله ای تحت

نام «کشور وحشی‌ها» خبر از تخریب مقبره های ارمنیان در این کشور داد. سردبیر نشریه در مقاله خود می نویسد، «اخیراً نامه‌هایی از اهالی شهر «سومگایت» برای آنان ارسال شده است که در آن ساکنین این شهر با ناراحتی و عصبانیت خبر از نابودی قبور ارمنیان می دهند. نگارنده مقاله همچنین می نویسد که مقبره های ارمنیان در شهر باکو نیز تخریب و با خاک یکسان می شوند، به اعتقاد نگارنده، «این حرکات طبق برنامه و از قصد انجام می گیرند». سردبیر «رالی آذربایجان» در ادامه مقاله خود ضمن نکوهش این گونه اقدامات می نویسد: «این گونه حرکات و تخریب مقبرها به وجهه ملت ما شدیداً لطمه می زند، وجهه ای که هم اینک نیز شدیداً آسیب دیده و در خطر است». وی در پایان خواهان شناسایی کسانی که وجهه جهانی آذربایجان را خدشه دار می کنند شد.

حیثیت

بنا به گزارش نماینده کلیسای ارتودکس یونان در اتحادیه اروپا، «کریستودولوس» رهبر کلیسای ارتودکس یونانی در نشست «شورای جهانی کلیساها» در سوئیس، «شناسایی قتل عام ارامنه و کشتار مسیحیان یونانی توسط ترکیه را مهم دانسته و بر رسمیت شناختن آن تأکید ورزیده است.»

به گزارش خبرگزاری «پان آرمنیان»، «کریستو دولوس» همچنین بر بررسی عضویت ترکیه در اتحادیه اروپا و مسئله قتل عام ارامنه به صورت همزمان تأکید نموده و گفت: «حتی اگر ترکیه امروزی را نتوان به خاطر وقایع دهشتناک گذشته بازخواست نمود، با این حال برای خود ترک‌ها قبول صریح این جنایت‌ها می‌بایست مسئله ای حیثیتی محسوب گردد.»

نماینده تبلیغاتی

«عزیز اگیول» نماینده مجلس ملی ترکیه از حزب حاکم «توسعه و عدالت» که برای شرکت در اجلاس عالی مجالس کشورهای عضو «ناتو» در ماه مه (اردیبهشت) در پاریس حضور داشت در خلال برگزاری این نشست کتابچه ای تحت نام «مسئله ارمنی و واقیعت‌ها» میان شرکت کنندگان پخش کرد. این کتابچه به زبان های انگلیسی، فرانسه، آلمانی و ترکی بوده و در آن مطالبی در نفی قتل عام ارمنیان به چاپ رسیده است.

